ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԼՂՀ ֆինանսների նախարարության 2016 թվականի օգոստոս ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

Ընթացիկ աշխատանքներ

Նախնական տվյալներով 2016 թվականի ութ ամսվա ընթացքում ԼՂՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 18396.8 մլն դրամ՝ պլանավորված 18376.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 0.1 %-ով կամ 20.8 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 0.3 %-ով կամ 46.1 մլն դրամով:

Օգոստոս ամսում ԼՂՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 2524.2 մլն դրամ:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 78 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 2 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 36 ստուգում, այդ թվում՝ բացահայտվել 7 ապօրինի գործունեության ծավալման փաստ: Իրականացված ստուգումների արդյունքում լրացուցիչ հաշվարկվել է 28.6 մլն դրամ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ: Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 88 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 57-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 10-ը՝ գործունեության չծավալման, 6-ական՝ ակցիզային դրոշմանիշների շարժի ու դրոշմավորման կանոնների պահպանման և պիտանիության ժամկետը լրացած ապրանքների դուրսգրման գործընթացի և 9 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել 5 վարչական գործ՝ 14.9 մլն դրամ գումարով, ավարտվել՝ 7 վարչական գործ, որով բավարարված գումարը կազմել է 10.9 մլն դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 60 վարչական գործով սահմանվել է 0.9 մլն դրամ վարչական տուգանք:

Նախաքննության ընթացքում գտնվող 1 քրեական գործով վերականգնվել է պետությանը հասցված 200.0 հազ. դրամի չափով վնասը:

«Հաստատագրված վճարների մասին» և «Արտոնագրային վճարների մասին» ԼՂՀ օրենքներում կատարված փոփոխություններին համապատասխան տրամադրված արտոնությունների արդյունքում վերահաշվարկվել են ապրիլ-հունիս ամիսներին հաշվարկված հաստատագրված և արտոնագրային վճարները, որի արդյունքում 1516 հարկ վճարողների պարտավորությունները նվազել են 43.3 մլն դրամի չափով:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 5205 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 4401:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 25 պայմանագրեր:

Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 89 վարձու աշխատողի՝ 12.2 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 29 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Ֆինանսների նախարարի հրամանով «Հաստատագրված վճարների հաշվարկման ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների մասին» հայտարարությունների ձևերը համապատասխանեցվել են 2016 թվականի հունիսի 30-ին «Հաստատագրված վճարների մասին» ԼՂՀ օրենքում կատարված փոփոխություններին:

ՀՀ և ԼՂՀ հարկային մարմինների միջև իրականացվել են անուղղակի հարկերի հաշվանցումների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

Օգոստոս ամսում հարկային մարմնում կայացել են հարկային ծառայության առաջատար և կրտսեր խմբերի թափուր պաշտոններ զբաղեցնելու համար փակ և բաց մրցույթներ (այդ թվում՝ կրկնակի), որոնց արդյունքում 5 հաղթող ճանաչված մասնակիցներ նշանակվել են հարկային ծառայողի պաշտոնների:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 204, ելքագրվել՝ 78 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի: